ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   - Արմեն Գրիգորյան, ԱԽ քարտուղար
   - Տաթևիկ Պետրոսյան, ԱԽ քարտուղարի խորհրդական
   - Սևակ Ղահրամանյան, ԱԽ քարտուղարի օգնական

2. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Հունաստանի Հանրապետություն, Դելֆի, 2026թ., ապրիլի 21-ից 23-ը:

3. **Գործուղման նպատակը**
   Գործուղման նպատակն էր մասնակցել «Դելֆի տնտեսական ֆորում»-ին և ունենալ երկկողմ հանդիպումներ:

4. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված թեմաները**
   ԱԽ քարտուղարը հանդիպել է Մոլդովայի Հանրապետության նախագահի ազգային անվտանգության խորհրդական Ստանիսլավ Սեկրիերուի ու Թուրքիայի 11-րդ նախագահ Աբդուլահ Գյուլի հետ, ինչպես նաև մասնակցել է «Դելֆի տնտեսական ֆորում»-ին:

   Մոլդովայի Հանրապետության նախագահի ազգային անվտանգության խորհրդական Ստանիսլավ Սեկրիերուի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստան-Մոլդովա երկկողմ հարաբերությունների օրակարգն ընդգրկող հարցեր և նախանշվել են հետագա համագործակցության հնարավոր ուղիները:

   Թուրքիայի 11-րդ նախագահ Աբդուլահ Գյուլի հետ հանդիպմանը քննարկվել են ինչպես երկկողմ հարաբերություններին առնչվող հարցեր, այնպես էլ մտքեր են փոխանակվել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի շուրջ:

5. **Պայմանավորվածությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները**

Մոլդովական կողմի հետ պայմանավորվածություն է ձեռքբերվել խորացնել համագործակցությունը երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում:

6. **Ստորագրությունը, ամսաթիվը**

Արմեն Գրիգորյան

Տաթևիկ Պետրոսյան

Սևակ Ղահրամանյան

29.04.2026թ